100. ՀՈՐ ԽԸՐԱՏԸ ԻՐԱՆ ՏԸՂԵՐԱՆՑԸ

Ըլըմ ա լըմ չի, մի հարուստ մարթ ա ըլըմ։ Էս հարուստին ունենըմ ա իրեք տըղա, մըեռնիլուց առաջ, մի օր սա՛ կանչըմ ա իրան տըղերանցը ասըմ ա. «Ա՛յ վըերթենի ջան, դե՛, էսա ես մըեռնըմ եմ, տո՛ւք եք գյիդըմ, թե վրե՞նց կանեք, ի՞նչ կանեք, մըենակ մի խըրատ եմ ծըեղ տալըի, վըեր փըսակվեք, առանց ճընանչըիլու, առանց տըենալու խամ, օտար տըեղից ախչիկ չի առնեք. ծրեր ճիպոտը ծրեը քոլըիցը կըկըտրեք»։

Անց ա կենըմ մի էրկու օր, էս մարթը մըեռնըմ ա։ Հոր մըեռնիլուցը մի տարի եդը, մեծ տըղեն քյընըմ ա ո՛ւրո՛ւշ աշխար, մի սո՛ւրո՛ւն ախչիկ ա պըտահըմ, տա՛ սիրըհարվըմ ա տրա՛ վըրա՛ ու ինքը իրան միչին ասըմ ա. «Հու սըրանից լա՛վ ախչիկ մրեր քաղաքըմը ճարվիլ չըդի»։ Առնըմ ա պիրըմ ա տուն, էն էքսի տարին միչնակ տըղեն ա քյընա՛ցած ըլըմ ուրո՛ւշ երդյիր. նա՛ էլ ա ընդի մի ախչիկ տըենըմ, առնըմ ա հետը պիրըմ։

Համա պո՛ւճո՛ւր տըղեն ասըմ ա. «Չէ՛, ես իմ հոր խոսկը տափը չեմ քըցիլ, պըետկ ա ես մըեր քաղաքիցը կընիկ առնեմ էն էլ մընչևը ծանոթանամ վրե՛չ, իրան հըրևաններին հըրցրնեմ վրե՛չ. թե ինչ տըեսակ ախչիկ ա, առնիլ չըդեմ»։

Անց ա կենըմ մի տարի, էս պո՛ւճո՛ւր տըղեն հենց իրանց քյո՛ւշի ծրերըմը մի ախչիկ ա տըենըմ, խի շատ լա՛վը, սո՛ւրո՛ւն ու շընորքով, սա՛ էտ ըխչըկանը աչկով պահրմ ա, եդնեն քյընըմ տան տըեղը մա՛նըմ ա ու տրեենըմ ա, վրեր չէ ըխչըկա լա՛վո՛ւթինըմը խոսկը չիկա, հըվանըմ ա ու առնըմ ա էտ ըխչըկանը։

Արթեն իրեք ախպըերն էլ փըսակված են, իրեքն էլ իրար հետ քյընըմ են Ֆըերսի։ Մի շափաթ թե էրկու շափաթ եդը կյալիս են տուն, պուճուր ախպըերը տըենըմ ա իրան կընիկը էնքան ա լըղարել, վըեր էլ ասըելու չի։ Կընգյանը հըրցընըմ ա ասըմ ա. «էտ ի՞նչ ա ըյել, էտ խի՞ ես տըհե լըղարել»։ Ասըմ ա. «էքուց տանը կաց, տես արա կըտենաս»։

Էքսի ռավըետը տըհանք իրեք ախպըերով քյընըմ են ֆըերսի, ճըմփրի կիսին պուճուր ախպըերը փորը փըռնըմ ա. «Վա՜յ փորս, վա՜յ փորս», ու նըստըմ ա։ Ախպըերտինքը վըեր տըենըմ են էլ տա կարըմ չի կյա, ասըմ են. «Դե՛, վըեր տըհե հիվանդ ես, էլ կյալ մի, ետ տա՛ռ, քյնա՛ տուն»։

Էտ պուճուր ախպըերը կյալիս ա տուն տըենըմ ա իրան ախպոր կընանիքը ամըեքը մի սիրեկանըի կըշտի նըստած, կուռներնուն էլ տըհանց ճըտավը քըցած, ուտըմ, խըմըմ, քյեփ են անըմ իրան կընիկն էլ դաքներուն քոծութըին ա անըմ, դես ա վազ տալըի, ղեն ա վազ տալըի, վըրեն բղավըմ են՝ էս տա՛ր, էս պի՛, էն պի՛, ու մին մին էլ աըրա՛ն սիլլա են տալըի, մազըերիցը քաշըմ, մինչկին սըրո՛նցկըմ ու մի ղատ էլ ա տալըիս չեն՝ ուտըի։

Էս պուճուր ախպըերը տանը տապ ա անըմ ու չիմ տենըմ ա, ըրուսյունը ախպըերտինքը կյալիս են տուն, պուճուր ախպըերը պա՛ն չի ասըմ։ Հաց են ուտըմ, պըրանվըմ են քընըմ, էքսի ռավըետը իրեք ախպըերով, վըեր ֆըերսի են քյնըմ, ճըմփին պուճուր ախպըերը էրեգվա տըեհածը ասըմ ա ախպորտանցը, տըհանք հըվատըմ չեն, ախպոր վըրա ծիծաղըմ են ու ասածն էլ պա՛նի տըեղ չեն տընըմ։ Էս պուճուր ախպըերն էլ դա՛րդիցը հենց ըտիյան կյըլոխը տանըմ ա ու կորչըմ ա։

Էտ էրկու ախպըերը րուգյունը կյալիս են տուն. գյիդըմ են, թե ախպըերը տանը կըլի, տըենըմ են վըեր եկել չի, գես են տըեպյակըմ, ղեն են տըեղակըմ, քըթնըմ չեն։

Էս պուճուր ախպըերը քյընըմ ա պըտահըմ ա մի չոբանըի, իրան շորերը փոխըմ ա չոբանըի հետ, կըլխին էլ մի հին քաչալըի թա՛սա՛կ ա տընըմ ու ճամփա ա ընգյնըմ. քյնըմ ա, քյնըմ ա, մըշկըլտուս ա կյա՛լի ուրո՛ւշ թաքավըերի երգյիր։ Կյա՛լիս ա էտ թաքավըերի կուշտը ու տա՛ռնըմ ա տըրա՛ ծիյապանը։ Մի օր տա՛ ճա՛շ վախտը, վըեր ծիյանը պիրըմ ա ծովըի ղըրաղին ճո՛ւր ա տալըի ու բաի նըստըցնըմ ինքն էլ ղըրաղ ա ըլըմ ու մի շըվաքի տակի նստըմ, հաց ա ուտըմ։ Մըհել ըիրդա՛ն տըենըմ ա հըըես ծովըիցը մի յա՛վ քու սասած ծի տո՛ւս եկավ ու էտ մագյաննըերիցը մընի հետ

հաղ արավ, հաղ ու ըլետ ծովըմը ռաթմըիշ ըլա՜վ։ Տա՜ ծըեռաց կըլ-խըի ա ըլըմ, վըեր էն ծին ծովըի էր ու հըրեղեն էր։

Մի օր էլ թաքավըերը կյա՜լիս ա ծիյանում մըտիկ ա անըմ, տըեսնըմ ա, վըեր էտ քաչալըի կյա՜լու օրըիցը ծիյանը լա՜վացըել են շատ, լա՜վ էլ շըտանըմ են, մընի մաղն էլ ա պըկասըմ չի. Թաքա-վըերը ասըմ ա. «Տըղա՜, ըսօր աղըիղ օր ա, սիըրտըտ ի՞նչ ա ուզըմ. քեզ ի՞նչ փեշքյեշ տամ»։

Ասըմ ա. «Թաքավըերը ապրած կենա, էն կապըիտ ծիյու քու-ռակը ինձ փեշքյեշ արա»։ Թաքավըերը ասըմ ա. «Բա նըրա՜ն քու-ռակը վըերդիյան ա՞»։ Ասըմ ա. «Եփ վըեր ունըենա, էն վախտը»։ Ասըմ ա. «Ա քու տունը շինվի, նաղըը հիլ ես արել, նիսյի եղնա եու ընգյելը»։ Ասըմ ա. «Թաքավըեր ջան, ուզըմ եմ իմ բախտը փորցեմ. ինչ կըլի կըլի՝ յա՝ բախտ, յա՝ ղսմաթ»։ Ասըմ ա. «Դե տու ես գի-տըմ, թող քու ուզածն ըլի»։

Անց ա կենըմ մի տարի, էտ կապըիտ ծին ցընգնըմ ա, էս քաչալը էտ քուռակը վըեր ա ունըմ ու պահըմ ա իրան մըհար, վըերը տարով մեծանըեր, տըրա՜ քուռակը օրով մեծանըեր։ Մի տա-րի եդը, քաչալըի քուռակը տա՜ռնըմ ա մի էն տըեսակ ծի, վըեր վըե՞չ ուտըես, վըե՞չ խըմես, էս քուռակի յորիշին մըտիկ անըես. էտքան պա՜նըի հետ էլ իմաստուն ա ըլըմ էտ քուռակը։ Քաչալը հենց իրան սըվըրցընըմ ա էտ քուռակին, վըեր քուռակը պուկ չի կյա՜լի, դո՜ըը ինքը քյընըմ ա, քուռակը եղնեն։

Էն օրվանից, վըեր քաչալը ախպորտանցը ասըել էր, թե՝ ծըեր կընանիքը սիրած են պահըմ, ախպըերտինքը սկըսըմ են իրանց կընանունց վըրա՜ խորթ-խորթ մըտիկ անըիլը։ Էս կընանիքը կըլ-խի են ըլըմ, վըեր իրանց մըրթկերանցը խա՜բա՜ր տըվող ա ըլել էտ պա՜նը, էտ էլ իրանց պո՜ւճո՜ւր ախպորիցը սավահի օքմըի չի խա՜-բա՜ր տըված ըլըլ, նըրա՜ մըհար, վըեր նա՜ էր տըեհել նըհանց ի-րար հետ, գյիդըմ են, վըեր իրանց տըքրակինը իրանցից վախըմ ա, նա՜ խա՜բա՜ր չի տալ։ Տըհանք սկսըմ են էտ պուճուր տըեքոր վըրա՜ մուռ պահըիլը ու վըերթըմ են ուտըմ, վըեր նըրա՜ տըեղը մա՜նա՜ն ու վըետով-կըլխով կորցընեն։

Տըհա՜նք կանչըմ են մի շա՜դո՜ւ պըռավըի, խելախ վըեսկի են խոսք տալըի տըրա՜ն ու ասըմ. «Ա՛ պառավ, մըենք քեզ էսքան վըեսկի կըտանք, եթե տու մըեր խոսկը կատարես»։

Պառավը, վըեր վըեսկու անըմը մա՜նըմ ա, աչկերը չորս ա ըլըմ, ասըմ ա. «Աչկիս վըրա՜, ծըեր ցավը տանըեմ, ծըեր խոսկը հու առանց վըեսկի էլ կըկատարեմ»։

Ասըմ են. «Ջի՛, մընենք քեզ էսքան վըեսկի կըտանք, մի ենակ տո՛ւ մըեր պո՛ւճուր տեքորը քըթի ու վըետով-կըլխով կորցնըիլ տուր»։

Ասըմ ա. «Ի՛, ես էլ ասըեմ էս ի՞նչ դեն ասըիլ, բա նըրա՛ ․․ըթնիլըմը ինչ կա, էրկու օրըմը կըքըթնեմ»։

էտ պառավը մի քյիսա վըեսկի ա առնըմ ու սկըսըմ ա աշխար-աշխար ման կյա՛լը, հարց ու փորց անըիլը, թե վըերդի օւար մարթ կա, տըհե քաղաքից-քաղաք պըտըտըիլով կյա՛լիս ա, տ՛ուս ա կյա՛լի էտ թաքավըերի ֆըեղը, վըերդեղ էս տըղեն ա ծիյապ․ն, մի իրեք օր ըտի հարց ու փորց ա անըմ ու մանըմ ա, վըեր էտ թաքավըերի ծիյապանը հենց իրան կորուստն ա։ Հըմի տա՛ վ․սխըմ ա տըրա՛ն սպանըիլ տա, դե ինչքան ըլի թաքավըերի ծիյ․․դան ա։

Ըտի էտ պառավը մի իրեք օր մընըմ ա ու քիշեր-ցիրեկ մ․տածըմ ա, թե ինչ անի, վըեր թաքավըերի իրան ծըեռովը էտ տ․դին սպանըիլ տա։ Վըերջը տա՛ վըեր շատ մըտածըմ ա, տըենը ․ ա ըլըմ չի, ասըմ ա. «Մի քյնա՛մ թաքավըերի կուշտը, պալատը տըենամ, բա՛լի ընդի մի մըհանա պա՛ն եմ քըթնըմ»։

Կյա՛լիս ա էտ թաքավըերի պալատըի տ՛ուը, չորս ղուլիցը մըտիկ անըմ ա, մըտիկ, տըենըմ ա, վըեր էտ զայդի պալատ մի տըեղ էլ ա կավըեշ, ինքն իրան ասըմ ա. «Թա վըեր սա՛ մարմար քարից էր ըլնըլ, ինչքան լա՛վը կըլըեր»։ Մըհել ասըմ ա. «Ըհ՞ը, էս թաքավըերին կասըեմ, վըեր նոքյա՛րտ մարմար քարի տըեղը գյիդըմ ա մարմար քար պիրիլ տ՛ու, պալատըտ մարմար քարից շինիլ տուր»։

Էս պառավը կյա՛լիս ա, վըեր մըտնըի պալատը, տըրա՛ն կըղնցնըմ են, ասըմ են՝ էտ ո՞ւր ես քյընըմ։ Ասըմ ա. «Փըլան թաքավըերն ա ինձ ղըրգյել գործով, ծըեր թաքավըերի կուշտը»։

Սըրա՛ն հիլ են անըմ, քյնըմ ա էտ թաքավըերին կյլ․խ ա տալըի ու նստըմ ա։ Թաքավըերը ասըմ ա. «Ի՞նչ ես ուզըմ, ա պառավ, ընչի՞ ես եկել»։ Ասըմ ա. «Հե՛չ, թաքավըերը ապրած կենա, ․րլան թաքավըերի հաց թըխողն եմ, եկել ի ծըեր քաղաքը ման կյա՛լ, ասըեցի մի նի մըտնըեմ քու պալատը տըենամ լա՛վն ա՞»։ Թաքավըերը ծըծաղըմ ա, ասըմ ա. «Հըվանեցի՞ր»։

Ասըմ ա. «Հա՛, թաքավըեր շան, շատ լա՛վն ա, համա դե, վըեր մարմար քարից էր ըլել՝ էլ քու պալատըի պըես պալատ ըշխարքիս իրեսին ըիլ չէր»։

Թաքավըերը ասըմ ա. «Ա՛ պառավ, պա՛ն ես գյիդըմ՝ պա՛ն ասա, ես էլ եմ գյիդըմ մարմար քարը շատ լա՛վն ա, համա դե ո՞ւր ա, ըսկի ըստեղ նհե քար չի ճարվըմ, էլ ինչ մընաց մարմարը»։

Պառավը ասում ա. «Ի՜, տու էլ ես դարդ անում. էն նոքյարը, վրեր տու ունես, էն հու նրան կանչես, հրամայես ու ահ տաս, նա ծրեռաց կըպիրի»։ Ծրեռք թաքավրերը հրվատում չի, համա վրեր պառավը մի քանրի պան ա սուտրից-մուտրից հընարում ու ասում, թաքավրերն էլ մրիտն ա քրցում էտ քուռկի պատմութինը, վրեր հըլա ծիյու փորրմը զատ չիկար, ասրեց. «Ընրա քուռակը ինձ փեշքյեշ կըտաս»։ Ասում ա. «Չէ՜, ուրեմը էս պառավը դուզ ա ասում»։

Էքսի ռուգյունը թաքավրերը քաչալին կանչում ա իրան կուշտը, ասում ա. «Քաչա՜լ, ես ուզում եմ, վրեր իմ պալատը մարմար քարից շինեմ, մըչև էքուց էս վախտ, եթե մարմար քարը պիրիր վրեչ կըլյոխտ թոցընիլ եմ տալրի»։

Էտ խեխչ քաչալը կյալիս ա կյումը ծիյու ճակատը պաչում ա ու ակսում ա լաց ըլիլը։ Ին ասում ա. «Էտ խի՞ ես լաց ըլում»։ Ասում ա. «Բա վրե՞նց չի լաց ըլեմ, էքուց ռուգյու թաքավրերը կյըլոխս թոցնիլ դի տալ»։ Ասում ա. «Խի՞»։

— Բա՜ սրհե-սրհե հրրաման ինձ տրվավ, մընչև էքուց ռուգյու պրետկ ա կատարեմ։

Ին ասում ա. «Վա՜յ է, քու տուռնը չի քանդվի, ես էլ գյիդում եմ, թե իմ տրերը քաչ ա։ Մընչև էքուց ռուգյու աշխարս կարող ա օխտը հետ քանդվի, շինվի, քընրի՜, քընրի՜, մըչև ռավրետը աստոծ ղորմած ա»։

Քաչալը պրրանվում ա, քընում ա, էն բաշտեն ծին կյալիս ա։ ու տրրան դուդով վրեր ա կըցնում, ասում ա. «Վը՜ե կաց, քյնանք»։ Տրհանք վրեր են կենում քյընում, ճըմփին ասում ա. «Միչկիս պրինդ կաց, էս ա մրենք կրքյընանք մի տրեղ, հենց վրեր հասանք ընդի ես կըշոքեմ, տու ծրեռաց վե կրկյաս, մի քար կըտընես ծոցրմտ ու պրինդ կընստես, ես քամու պրես թռչիլ դեմ, սար-քար լուղու դեն առնիլ ու եդերնուս դի դեն տալ. «Մարմար քարը տարա՜ն, մարմար քարը տարա՜ն, մարմար քարը տարա՜ն», տու սամսրեն ետ չի մըտրիկ անես, հենց վրեր ետ մըտիկ անես, ես էլ տու էլ քար կըտառնանք»։ Էտ քարը կըպիրես թաքավրերի տրռանը կըտընես, մրենք կրքյընանք մրեր տրեղը, կրքնենք, ըռավրետը վրե կրկենաս քու պիրածը կըտենաս»։

Տրհանք կյալիս են հասնում ըտի թըչէ, ծին չոքում ա տրրա մըտիցը ընգյած ա ըլում ասում ա. «Վա՜խ, վա՜խ, քոռանա աչկերս. ծիս ըրղարեց»։ Ին ասում ա. «Բրզարե՜լ չեմ, տրեղ ենք հասել, լեղ արա ասածս արա, էսա ես ետ կրփախչեմ»։

Տրրա մրիտն ա ընգյնում թըչէ՝ ծրեռաց, վեր ա կյալի մի կը-

տոր քար ա ծոցըմը տընում ու կըպչըմ ծիյու միչկիցը։ Սար, քար յուղու են առնում ու ղի են տալըի. «Մարմար քարը տարա՞ն, մարմար քարը տարա՞ն»։ Տըհանք ետ չեն մըտիկ անում։ Պիրում ա թաքավրերի տրու

տընում ու կյալիս են իրանց տրեղը քընում։

Լոռավրետը թաքավրերը վրեր ա կենում, տրենում իրանց տոնեերին տրեղ ու թաթար չիկա էնքան շարժիննի կա տըրած քարերից, վրեր էլ ասըիլու չի։ Մոտանում ա տրենում ի՞նչ քար՝ հըլեյի, թե հայլի ըլի, հենց կոկլըիկ, հենց սոթլըիկ, հենց պըլպըլում ա, վրեր մարթ մըտիկ անըիլով կըշտանում չի։ Ասում ա. «Տե՞ր աստած, էս էրաղ ա, թե էս ի՞նչ ա, մի քըշերվա միչին էս տրեսակ քար, էսրամ շատ, էս ով պիրավ, վրենց պիրավ, սա ինչ ուժի տեր ա»։

Թաքավրերը ըսկըսում ա էտ ծիյապանին հա՞մ շատ սիրիլը, հա՞մ էլ վախում ա՝ դյիղում ա, թե էտ նա շըլակով ա պիրել։ Էտ տըղի ախտոր կրնանիքը վրեր մանում են, թե իրանց տրեքրը եկել ա, քյնում են ղըռավրի կուշտը, ասում են.— «Էտ վրե՞նց արիր, վրեր ըլեա նա ա եկել, կարում չես հենց տրեղ ղըրգյես, վրեր քյնալը ըլի, էլ ետ կյալ չի ըլի».

Պառավը կյալիս ա թաքավրերի կուշտը, վրեր էտ քարը տրենում ա, աչկերը չրռում ա ու տրեղն ու տրեղը մընում ա սառած, կյալիս ա թաքավրերին ասում ա.— «Թաքավրերը ապրած կենա, էս տրեսակ մարմար քարի փետի մասալեն էլ պրետկ ա հասարակ փետ չի ըլի»։

Թաքավրերը ասում ա. «Բա ի՞նչ ղայղի փետ կըլի»։ Ասում ա. «Դալախշխարշի փետ պրետկ ա ըլի»։ Թաքավրերը ասում ա. «Բա էտ փրեաը վրերգեղ ա»։ Ասում ա. «Ծիյապանիտ ասա, նա կպիրի»։

Թաքավրերը ռուգյունը կանչում ա ծիյապանրին ասում ա. «Դե վրեր մարմար քարը ոյիրիր, էտ քարին ու գյորա էլ պրետկ ա փետը լավը ըլի, էքուց ռավրետ ղալախշխարշի փետը քարի կըշտին շարժին տրված ղրետկ ա ըլի»։

Նոքյարը կյալիս ա ծիյու կուշտը ու սկսում ա ծիյու ճրկատրիցը պաչիլը ու լաց ըլըիլը։ Ծին ասում ա. «Էտ ի՞նչ ա պրտահել, խի՞ ես լաց ըլում»։ Ասում ա. «Բա վրենց չի լաց ըլեմ, բսոր էլ կանչեց սրհե-սրհե ասրեց»։ Ծին ասում ա. «Քընրի, աստած ղորմած տ»։

Տա կյըլոխիր տընում ա ծիյու գոշին ու քընում։ Քըշերվա մի վախար ծին ղուղով տալրիս ա, ասում ա. «Վրե՞ կաց, քյընում ենք»։

Տա վրեր ա կենում, ծին ասում ա. «Միչկիս պինգ կըկըպչես, հենց վրեր տրեղ հասնենք, ես կըշոքեմ, տու վեկըկյաս ծրեռաց

մի ճիպոտ կըկըտրես կըկոխես քյըմա̈րիտ տակը կընստես վըըես-հս թռած կյա̈լ դեմ, սար ու քոլ եղերնուս ղի դեն տալ. «Դա̈լա̈խշխըշի փետը տարա՜ն, գա̈լա̈խշխըշի փետը տարա՜ն», տու̈ եդ չի մըտըիկ անըես, հենց վըեր ետ մըտիկ անըես, էրկուսըս էլ քար կըտա̈ռնա̈նք ու կըմընանք ընդի»։

Տըհա̈նք քյնըմ են տըեղ հասնըմ Թըշէ, ծին վըետներնուն տափռվն ա տալըի, սա̈ ծըեռաց թըռչըմ ա մի ճիպոտ ա կըտրըմ ու ծիյու շալակն ըլըմ, ծին թըռած կյա̈լիս ա, սար ու քոլ տըհա̈նց քըմակիցը ղի են տալըի. «Դա̈լա̈խշխըշի փետը տարա՜ն, դա̈լա̈խշխըշի փետը տարա՜ն»։ Տըհա̈նք ետ չեն մըտիկ անըմ, կյա̈լիս են պալատըի կուշտը. էտ ճիպոտը տընըմ ընդի, իրանք քյնըմ են, քընըմ։

Ըռավըետը Թաքավըերը վըեր ա կենըմ տըենըմ էն տըեսակ կարմըիր սու̈րու̈ն դու̈զ-դու̈զ փետեր ա սա̈քյա̈ծ էտ քարերի կըշտին, վըեր մըտըիկ ես անըմ, քյեփըտ կյա̈լիս ա։ Էս խեխչ տըղի ախպորտսոնց էն լա̈չա̈ռ կըմանիքը ըլետ մա̈նըմ են, վըեր իրանց տըեքըր ետ ա եկել, կյա̈լիս են պըռավըի կուշտը ասըմ են. «Ա՛ պառավ, բա տու̈ կարըմ չես հենց անըես, վըեր ճըրա̈ քյնա̈լը ըլի, կյա̈լը՝ չէ»։

Պառավը ասըմ ա. «Տու̈ք վախիլ միք, հանգյիստ կըցեք, էտ մըհետը տըրա̈ն հենց տըեղ ղըրգյեմ, վըեր էլ ետ չի կյա̈»։

Էքսը պառավը կյա̈լիս ա Թաքավըերի կուշտը, ասըմ ա. «Թաքավըերը ապրած կենա, էս տըեսակ մա̈սա̈լլին էն տըեսակ ուստա ա պըետկը, վըեր հենց պալատ շինի, ըշխարըմ հըլա̈ ըլած չի ըլի»։

Թաքավըերը ասըմ ա. «Ասա՛, հըմի էտ զայդին ուստեն վըերդիյան ա՞»։ Պառավը ասըմ ա. «Բա ուստա Մուրադը ի՞նչ ա»։

Թաքավըերը ասըմ ա. «Ա՛ պառավ, տու̈ դյըժվե՞լ ես, ի՞նչ ա, ուստա Մուրադը էս իրեք հարիր տարի ա, վըեր մըեռել ա»։ Ասըմ ա. «Քու վործը չի, տու̈ ծիյապանին ասա, նա̈ կըպիրի»։

Թաքավըերը մին հըվատըմ չի, մին էլ ասըմ ա. «Հըլա̈ փորցեմ ի՞նչ կըլի, կըլի»։

Էքսի րու̈ջյումը նոքյա̈րին կանչըմ ա, ասըմ ա. «Էս տըեսակ մա̈սա̈լլեն վըեր պիրել ես, պըետկ ա սըրա̈ն էլ արժանըի ուստա պիրես, վըեր մի էն տըեսակ պալատ շինի, ըշխարհիս միչին մի հատ ըլի»։ Տա̈ կյա̈լիս ա ծիյուն պատմըմ ա։ Ծին ասըմ ա. «Կըքըյնանք էսինչ տըեղը, նըրա̈ կյերեզմանն ա, ես քեզ տըեղը շհանց կըտամ, կըքանդես, վըեսկըռնին կըհանես աղլուխիտ վըրա̈ կըփը-

ռևս, ես էլ կըքյնա̈մ անմա̈աՙական ճուր կըպիրեմ վըրեն կըփըշեմ, կըսըղանա, վըճ կունենք, կըկյա̈նք, մի լա̈վ ա̈խպո̈ւր կա, ընդի կընըստեք, կուտեք, կըխըմեք ու կասըես։ Կասըի՝ սարքերըս ըստի չի։ Կրխընթըես կասըես՝ տո̈ւ ըստի մի քիչ կաց ես քյնըա̈մ սարքերըտ տիրեմ։ էտ ըխպըրի վըր ըղոլովը մի ճամփա ա քյնըմ, էտ ճամփրեննի կըքյնաս, կըքյնա̈ս, մընչևը քեղ մի ցըմցըմկուտ կըպըտաՙի, կասըես. «Խըվա՛յ, էս ի՞նչ լա̈վ չա̈յիր չիման տըեղ ա»։ Մըխնլի էլ կըքյընա̈ս, մի չեչոտ քար կըպըտաՙի, կասըես. «Խըվա՛յ էս ի՞նչ սո̈ւրուն կոկլիկ քար ա»։ Մի քիչ էլ կըքյնա̈ս, մի պա̈ց տո̈ւռը կըպըտաՙի, էտ պա̈ց տո̈ւռը կըփակես. ըտիյան կըթեքվես աչ մի փակը՝ կըպըտաՙի, էտ փակ տո̈ւռը պա̈ց կանես. մի քիչ էլ կըքյնա̈ս, մի կյեղ կըպըտաՙի. մի վըեչխար. կյիլի դարին խոտ կա, վըչխարի ղաքին՝ մըիս, խոտը կըտընըես վըչխարի ղաքին, մըիսը՝ կյիլի. մի քիչ էլ կըքյնա̈ս, կըտըենաս մի տուն կա. կըմըտնես էտ տունը, կըտենաս մի մարթակեր պառավ աչ ծըիծը ծախ ուսովն ա քըցել քամակը, ծախ ծիծը աչ ուսովն ա բըցել քամակը ու լոշ ա թըխըմ։ Տա̈ հենց վըեր կկըռանա թոըենը թըշէ, տո̈ւ ծըեոտ կըքցես նըրա կըշտի տոպրակը վըճ կունես ու կըճըղես, հենց էտ տոպրակի միչին ա իրան սարքերը»։

Տըղեն արՙև անըիլով քյնըմ ա, հըսնըմ ա ընդի։ Ծըեռը քցըմ ա, վըեր ունըմ ՙըլե ՙըլո̈րվըմ ա թըշէ, պառավր տըենըմ ա ու եդնևն ա ըլըմ։ Տըղեն վաղ ա տալըի, նա̈՝ ըըմակիցը։ Ասըմ ա. «Կյևլ փըռնըի»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև մըՙի իմ ղաքին խոտ էր, ՙիմի՝ մըիս, թող քյնա̈»։ Ասըմ ա. «Վըեչխար տո̈ւ փըռնըի»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև մըՙի իմ ղաքին մըիս էր, ՙըմի՝ խոտ ա, թող քյնա̈»։ Ասըմ ա. «Պա̈ց տո̈ւռ, փըռնըի»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև ՙըմի պա̈ց ի, ըսօր փակ եմ»։ Ասըմ ա. «Փակ տո̈ւռ, փըռնըի»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև մըՙի փակ ի, ՙըմի պա̈ց եմ»։ Ասըմ ա. «Չեչոտ քար, փըռնըի՛»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև մըՙի չեչոտ քար եմ ըլել, մըՙի սո̈ւրո̈ւն քար եմ»։ Ասըմ ա. «Ցըմցըմա փըռնըի՛»։ Ասըմ ա. «Խի՞ փըռնըեմ, մըչև մըՙի ցըմցըմա եմ ըլել, մըՙի չա̈յիր-չիմա̈ն եմ, թող քյընա̈»։

Կըպիրես էտ սարքերը կըտաս իրան. Հենց էտ վախտ ես կըշտերնուտ կկաղնեմ, կընըստեք ու կկյա̈ք թաքավըրերի կուշտը, էտ պալատը կըպատըի, կըպըրծըռնի ըլեռ իրան կըտանես իրան տըեղը կըՙըսցըռնես կասըես. «Աստված, քո մեղավըեր ՙոքին պիրի, ըլեռ բեղ ՙըսցըրի, ա՛ռ»։ Նա̈ ծըեռաց ըլեռ էն առաչվա վըսկըռնին կըտա̈ռնա, կըլցնես իրան փոսը, ֆըեղը վըրա̈ կըտաս ու կկյա̈ու»։

Վրենց վրեր էտ իմաստուն ծին տըրան խըրատում ա, սըվըրցընում ա տա նըհենց էլ անում ա, ուստա Մուրադին իրան սարքերովը պիրում ա հանձնում թաքավրերին, ուստա Մուրադն էլ հու էն տրեսակ ուստա ա ըլել, վրեր տասնըհինգ ուստրի գործը նա մի օրումը անըիլիս ա ըլել։ Մի շաֆտվա միչին էտ թաքավրերի մըհար մի էն տրեսակ պալատ ա շինում, էն տրեսակ ֆասադ ա քաշում, վրեր էլ վրեչ ուտրես, վրեչ խըմես քըշեր-ցիրեկ կաղնես ու թըմաշա անրես։ Հենց, վրեր ուստեն պատում, պըրծընում ա. կյալիս ա էտ նոքյարի կուշտը, ծին ասում ա. «Դե՛, եկեք ծրեղ տանրեմ»։

Տըհանց տանում ա ըլետ կյըրեղմանրի տրեղը, տըղեն տըրան ըտի ըլետ թաղում ա ու ծիյու հետ կյալիս են տուն։ Պառավը տրենում ա, վրեր չէ՛, էտ տըղին կըրացավ վրեչ կորցընիլ տալ. ինքը կյլոխը առնում ա ու կորչում ա։ Էտ ախպորտանց կրնանիքն էլ, իրանց ըլած-չըլած հարստութինը վրերը սիրածների հետ են կերել, խըմել, ծախսել, քոռ ու փուչ են արել, վրերն էլ վրեսկի են շինել էտ պըռավըին տըվել, վրեր իրան կորցընըիլ տա, հըմի մընացել են սըհե օրվա հացի կարոտ. իրան կընիկն էլ հըլա խեխչ ու կըրակ նըհանց ղաքին քոծութին ա անում։

Թաքավրերը վրեր քաշվում ա էտ թազա պալատը, լավ ղըրթարում հըվաքվում մեչը, մի ազրիզ օր էտ տըղին կանչում ա, ասում ա. «Տըղա՛, էս չիմ քու հունարն էր, ըսօրվանից տու իմ պալատի ամրեենամեծ վազիրըն ես»։

Տըրան լավ վազիրական շորեր ա հըքցընում, նշաննրի ա փեշքեշ անում, ծիյու մըհար լավ թամք ու սարք ա էրծաթաճըրած շինիլ տալըի ու հաքնում կապում, տանում կյալի, վրեր մըտիկ անողի քյեփը կյալիս ա։ Ինքն էլ ըոյով-բուստով լավ տըղա էտ շորերն էլ վրեր հաքնում ա, արթեն մի ազրեիլ հըրիշտակ ա տանում։

Մի օր քյնում ա թաքավրերի կուշտը ասում ա. «Թաքավրերը ապրած կենա, ես կընիկ ունեմ, ախպերտինք ունեմ, հըրաման տու, քյընամ պիրեմ իմ կուշտը»։ Ասում ա. «Աչկիս վըրա, բյընա՛»։

Կյալիս ա տրենում ախպերտինքը էն հալի են, վրեր էլ ասըիլու չի։ Տըհանք ախպորը տրենում են թը չէ, վաղ են տալըի փըթաթվում են իրան պըչպըչորում, մի քիչ զըրից են անում, ախպորտանցը ասում ա. «Բա վրեր ես ծրեղ ասըի՝ սըհե պան են անում ծրեր կընանիքը, տանք ինձ հըվատիք վրեչ»։ Տա հետը լավ-լավ շորեր ա տարած ըլում, իրան կընդյա մըհար էլ, ախպորտանց մըհար էլ, հաքնում են, զըրթարվում, նըհանց կընանունցը ըտի ըր-

բախում են ու իրանք կյալի էտ թաքավրերի պալատը։ Ախպորտանցը լավ կործրի ա տրնում, իրանք էլ մարթ ու կընիկ նորից օխտը օր, օխտը քշեր հըրսանըրիք են անում, ուտում, խըմում, քյեփ անում։

Իրանք հասնեն իրանց մուրազին, տո՛ւք էլ հասնեք ծրեր մուրազին։